

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետ, հրավերովը Ամերիկայի Միացյալ Նահանգաց հայոց թեմական առաջնորդի, պիտի նախագահի Նյու-Յորքի նորակառույց Մայր տաճարի արարողություններին ապրիլի 28-ին և ապա Իր հայրապետական օրհնությունները պիտի բաշխի Մ. Նահանգաց և Կանադայի Հայոց թեմերի մի շարք եկեղեցական համայնքներին:

Վեհափառ Հայրապետը, Իր ճանապարհի վրա դեպի Մ. Նահանգներ, հրավերովը Վիեննայի հայոց եկեղեցական համայնքի վարչության, պիտի կատարի օծումը Վիեննայի հայոց նորակառույց ս. Հռիփսիմե Եկեղեցու ապրիլի 21-ին:

Նորին Սրբությունը հունիսի 15-ից հետո Իր ուղևորությունը պիտի շարունակի դեպի Հարավային Ամերիկա, հրավերովը Հարավ-Ամերիկյան հայրապետական պատվիրակին և Արգենտինայի հայոց եկեղեցական կեդրոնական վարչության, Իր օրհնությունը տանելու համար նաև այդ շրջանի Իր հոգեվոր զավակներին:

Սույն ուղևորության ընթացքում Նորին Սրբության պիտի ուղեկցեն գերշ. տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյան՝ առաջնորդ թեմին հայոց Վրաստանի, հոգշ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյան՝ տեսուչ հոգևոր ճեմարանի, և պրն. Արթուն Հատիտյան՝ խմբագիր «Էջմիածին» ամսագրի:

Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով կմեկնի ապրիլի 16-ին և կվերադառնա Մայր Աթոռ հուլիս ամսի կեսերին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

25 մարտ 1968 թ.
Ս. Էջմիածին,